



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀՐԵՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 19 ԱՊՐԻԼ 1875 ԹԻԻ 1012

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յանցելուն Գերմանիոյ կառավարութիւնն յայտարար Կառավարութեան, ծանուցանելով նմա բարեկամաբար թէ ինքն միտք ունի նոր օրէնք մի հաստատել արգելելու համար որ Գերմանիոյ հպատակք կարող չլինին գրայի տէրութեանց խաղաղութիւնը վրդովելու արգրական յարձակմամբ. ուստի կրփափաքի որ Պէճիքայի կառավարութիւնն ևս, նմանապէս ուրիշ տէրութիւնք Գերմանիոյ օրինակին հետեւին, և իրարու հետ համաձայնին այս ինքիբը ժողովով մի կարգադրելու համար:

Երբայից արգրաց մէկ մասը սխալ մեկնութիւններ տալով վերայիշեալ յայտարարին, չափազանց կերպիւ մեղադրեցին Գերմանիոյ այս ընթացքը, զոր սպառնական և Պէճիքայի անկախութեանը հարուած մի համարեցին: Այս դէպքին նկատմամբ Անգղիոյ բարձրագոյն մէջ բացատրութիւն խնդրուեցաւ միտար Տիգրայէի առաջին նախարարէն. որ պաշտօնական կերպիւ իմացոյց թէ յիշեալ յայտարարը՝ որուն մէկ օրինակը, ըսաւ, Գերմանիոյ կառավարութեան կողմանէ յուղարկեցաւ Անգղիոյ դահլըճին, ամենեւին սպառնական չէ, այլ միայն դիտորդութիւններ կրպարունակէ որք բարեկամական զգացմանց ապացոյց մի են: Անգղիոյ առաջին նախարարին պաշտօնապէս զրուցած այս խօսքերը կապացուցանեն թէ Գերմանական յայտարարին առ թիւ Երբայից արգրաց մէկ մասին հրատարակածներն անտեղի և անհիմն են: Նըմանապէս սխալ է այն համբաւն՝ որով կուզեն հաստատել թէ Աւստրիան և Ռուսիան կրպաշտպանն Գերմանիոյ խնդրը:

Լոնտոնի յոյն վաճառական քիւր Բանտէլի Ռայլին՝ Անգղիոյ բարձրագոյն մէջ անդամ ընտրուին Յունաց արգրին ընդհանրութեանն ոչ սակաւ պատիւ կրնէ և նշանակութեան արժանի եղելութիւն մին է. որուն վրայօք Սթիքիէթօր, կոչուած անգղիական արգրիք հետեւեալ

սողերը կըհրատարակէ:

«Ի Պրայտօրդ քաղաքն Տօրիթշարի ընտրողական փոքրիկ ժողովոյն մէջ տեղի ունեցած ընտրութիւնն ոչ սակաւ զգացում պատճառեց պաշտօնական ակմբաց մէջ և ընդհանուր հաճութիւն հասարակութեան մէջ: Աղատական կուսակցութեան կողմանէ յառաջ բերեալ բարեաղդ ընտրելին (քանտիտա), քիւր Բանտէլի Ռայլին՝ արձանագրեալ քաղաք տասին ճէրորդ մասն շահեցաւ. և այս բանն ևս առաւել նշանակութեան արժանի է, որ անկեղծաբար յայտնած էր թէ ինքն (թէ և Անգղիոյ հպատակ) բայց Յունաց եկեղեցոյն անդամ է. և այս պատճառաւ ոչ սակաւ ընդդիմութիւն ունեցաւ: Մեք կարծումք թէ քիւր Ռայլին՝ Լոնտոնի Յոյն անգղիացի վաճառականներէն առաջինն է, որ Մեծին Բրիտանիոյ երեսփոխանական ժողովոյն մէջ պատգամաւորի աթոռ պիտի ունենայ:

Սպանիոյ գործոց կացութիւնն թէ և միևնոյնն է, թէ և համազգային պատերազմը կըշարունակէ, այսու ամենայնիւ տարակոյս չկայ թէ Տօն կարողութիւն զորաբանակը տկարանալու է վերայ և գասալիքներ անպակաս են, իրաց այս վիճակէն Ալֆոնս թագաւորին կառավարութիւնն կրնայ օգուտ քաղել, կրնէ անգղիական կշող օրագիրն, քաղցրութեամբ և խոհեմութեամբ վարուելով ժողովրդեան հետ և ապացուցանելով թէ նորահաստատ երիտասարդ թագաւորին կառավարութիւնն լաւագոյն է քան զՏօն կարողութիւնը: Սակայն այս խոհեմ ընթացքին հակառակն ՚ի գործ կըդրուի. քանզի, կըյաւելու յիշեալ օրագիրն, Ալֆոնս թագաւորին նախարարներն իրենց քաղաքականութեան ընդհանուր կանոն գրած են ճշեւ հասարակաց ազատութիւնը. վասնզի Մարիաթէն հասած վերջին լուրերն կըմանուցանեն թէ վարժապետ մի համարձակեր է աղերսագիր մի մատուցանել թագաւորին ընդդէմ նոր օրինադրութեան ՚ի մասին հասարակաց ուսման: Այս աղերսարկու

վարժապետն անմիջապէս բռնուեր և յաքսոր յուղարկուեր է: Այսպիսի բռնական գործքերը գուցէ առայժմ մեծ ընդդիմութիւն չգրուեն Սպանիոյ մէջ, քանզի ժողովրդեան միակ բողձանքը խաղաղութիւնը ձեռք բերել է. սակայն կանուխ կամ անագան ապագայի մը մէջ երիտասարդ թագաւորին այնպիսի դժուարութիւններ կրնան պատճառուել, որոց իւր ձեռքէն խիտ աւելի զօրաւոր ձեռք մի անկարող պիտի լինի յաղթել: Կշոյն է որ կրնէ զայս ամենը:

Գաղղիան հանդարտ և խոհեմ քաղաքակալութեան մէջ կըգանուի առայժմ թէ ներքին գործոց և թէ արտաքին գործոց նկատմամբ. ֆարիզի լրագիրք ոմանք կըհաւաստեն թէ ՚ի դումարին երեսփոխանական ժողովոյն՝ առաջարկութիւն պիտի լինի երկու միլիոն ֆրանքի հասցնել Մաք-Մահօն մարաշխախին տարեկան վարձքը իբրև նախագահ հասարակապետութեան. մինչդեռ այժմ տարին միայն 600,000 ֆրանք կընդունի:

Աւստրոհունգարիոյ կայսեր տեսակցութիւնն ընդ թագաւորին իտալիոյ՝ նոր երաշխաւորութիւն մի կըհամարուի վասն տեղութեան ընդհանուր խաղաղութեան:

Կըհաւաստեն թէ Գերմանիոյ կայսրն իւր մտերիմ խնդակցութիւնը՝ յատուկ նամակաւ մի, յայտնէր է Աւստրիոյ կայսեր և իտալիոյ թագաւորին ՚ի մասին իրենց տեսակցութեանը վերհետիկի մէջ, յաւելցնելով թէ այս երկու վեհապետաց համաձայնութիւնն մեծապէս նպաստամտոյց պիտի լինի սեղմելու զմիաւորութիւնն իշխանութեանց՝ որք յանձնառու եղած են հաստատուն պահել զխաղաղութիւնն:

Գերմանիոյ կայսրն ՚ի պատճառս անձնական տկարութեան, չկրնալով անձամբ այցելութեան երթալ իտալիոյ թագաւորին, իրեն տեղն յուղարկեց զկայսերական գահաժառանգ իշխանն՝ որ Նարոլի մէջ երկար տեսութիւն մի բրաւ վերջից՝ մասնաւոր թագաւորին հետ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԿԱՅԵԱԼ

Ի յիսկաւտար կենսագրութեան արքայան Հայրապետի Ներսիսի Ե. վեհափօռ. եւ ազգասեր կարողի-կոսի ամենայն Հայոց:

(Շարունակութիւն: Տես քիւ 1011)

Ոչ Հերակլ, և ոչ որդիք նորա, և ոչ մեծաւ մեծք Վրաստանի կարող էին այս մտանալ, և ներել Յովսէփայ, եթէ նա արդար և յանցաւոր էր: Բայց Ներսէս այնպէս էր անցքն ձեռակերպել, որ այնուհետեւ անհնար էր իւր Երեմիային արդարանալ: Ներսէս տեսանելով Պրինցի հանգամանքն, գործ գրեց Ղուկաս կաթողիկոսի Հայրապետական իշխանութիւնն. նորա պատգամաւորաց ճարտարութեամբ Սիւնեաց երկրի հինգ Մեթիքք ընդունեցին զՊրինցն, և սկսաւ թքաւոր ամուսմբ վերապատուել: Գիպակաց կողմն մէկ Պարտիկ բէլէ գնեց մի հայաբնակ բաղձամարդ գիւղ, և բէլի մեծակաւոյց բնակարանն արու իւր արքունիք. և սկսաւ վարժարանի հիմն դնել:

Յովսէփ վառ վեցաւ սրամտութեամբ, սկսաւ Մեթիքներուն դիմել ընդդէմ իւրեանց նորեկ թքաւորին: Մեթիքք խարստեցան Յովսէփայ հեղինակութեանն, և սկսան նոր թքաւորին

հետ այնպէս վարվել, ինչպէս մէկ ժամանակ Հայոց նախարարք Շապուհ Պարտիկ հետ՝ որ Հայոց թագաւոր էր գրուել: Եւ երբ Ֆօնայ խանն պատերազմ բացեց Հայոց դէմ՝ Պրինց աղաչեց Մեթիքք որ միաբանին և թշնամոյ դէմ մարտնչին: Մեթիքք պատասխանեցին. թքաւորն դու ես, գնա կուռիք, վերջապէս երբ Պրինց շատ թախանձեց, Մեթիքք իւրեանց զօրքն համախմբեցին: Պրինց և իւր որդիք անվեհեր առաջնորդեցին իւրեանց բանակին: Բայց երբ ճակատամարտն բարբաբեցաւ, իւրաքանչիւր Մեթիքք առին իւրեանց զօրքն հեռացան յամուր տեղիս, և մնաց Պրինցն և իւր որդիք և նորակիրթ զօրքն սակաւ. որք երես չգարձուցին ի թշնամեաց, այլ պատերազմելով յետս յետս գնացին, մինչև հասան յապահով անտառս Ղարաբաղու: Եւ այսպէս մաղապօրծ ճողպարեալ գարձաւ սրտակտուր ի Հնդիկս:

Պրինցի հեռանալէն յետ յերկրէն Սիւնեաց, մինչ Ներսէս գնաց Ղուկաս կաթողիկոսի հրամանաւ ի Պոլիս և ի Չիւսուսիս, Յովսէփ ժամանակ գտաւ: Սրաց Աղուանից կամ Գանձասարաց Յօհաննէս կաթողիկոսին, և նորա միջնորդութեամբ համոզեց Մեթիքք որ մտնեն ի հպատակութիւն Ռուսաց, որ կասպից ծովու կողմէն սկսել էին յառաջ խաղալ. և այսպէս անյայտ մնաց Պրինցի թքաւորութիւնը: Եւ Պրինցի զօրաց մէջէն տեսել եմ միայն կոստանդ անուամբ մի հայազգի հնդկաստանցի, որ մինչև ի 1825

ամն յԱստրախան Հայոց տպարանի մէջ կաշխատէր, և Լիթթայի տպարանի Հայոց տառերն, որպէս և Մատրասայ հին տպարանի այբուբենի պողպատեայ և պղնձի կաղապարներն իւրով ձեռամբ շինել էր: Այս կոստանդ առեւէր տէր իտալատուր աւագ քահանայի քեռ դուստրն, և ունէր բնակարան՝ աղա Մկրտումի տան հանդէպ: Աստրախանայ ծերոց մէջէն բազումք կային այս Պրինցի ակնատեսս, և նորա անցնցն տեղեակը, որպէս և ի Տիֆլիս՝ թէ հոգեորականք և թէ աշխարհականք. որք շարժելով զգլուխս կրպատմէին:

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յովսէփ արքեպիսկոպոսն՝ ընտրեալն ի Հայրապետութիւն Հայոց՝ մտեալ է Տիֆլիս: Առաջին նորա սկսեալ ի Գիորգի պարոնէ թագաւորէն վրաց և յարքայական գերբաստանէ նորա՝ ամենայն աւագորեարն վրաստանի կողմեալ յարքայազանց և իշխանազանց, ի թիւս սրոց կային հայազգի բէհրոցեանք (Միրի—չիքեար—բոչիտ) Արղւթեանք, Բէգթեարեանք, Թուամանեանք, Ղորղանեանք (Միրախու) և այլք բազումք, և տիկնայք մեծուհիք, որք բազկապուցանէին զարքունիս Բագրատունեաց, կային ի սպասու նորա, և անհանդուրժ մնային քաղցր ակնարկութեան նորա:

Իբր յեօթն ամաց հետէ պանդխտացեալ էր անդ Սերոբէ տէր Գեորգեան Պատկանեան, թոռն տէր Գարբիէլի Պատկանեան, զոր տեսաւք

ԱՉԳԱՅԻՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ(1)

Վանքի հարաւային կողմն է վանուց հիւրա- տուն Ղազար կաթողիկոսի շինած, որ Ղազարա- պատ կանուանի :

Վանքի արևմտեան կողմն է Սինօգի և Վեհա- րանի պարտէզն . վաղարշապատի դէպ արևել կանգուն կան Հոսիփոսէի և Շողակաթի վան- քեր . հնձանի մատուռին փլատակի հիմերն մի- այն կերևին :

Վանքի Ս. Էջմիածնի հարաւային կողմն կան- գուն կայ Գայիանէի վանուց անտառին հիւսի- սային արևելեան անկերն :

Վաղարշապատուց դէպ 'ի հիւսիս երկուժամ հեռու կայ Օշական գեղ, ուր կայ Ս. Մեսրոպ- պայ եկեղեցին . աւագ խորանին տակ փոքր մա- տուռն մի՝ մէջը Մեսրոպ թարգմանչի գերեզ- մանն : Այս եկեղեցւոյն բակին Աշտարակին մէջ է նաև Վահան Ամատունիի գերեզմանն :

Օշականէն դէպ 'ի հիւսիս Արագած լեռան զառին վերայ կանգուն կայ Մուղնէու վանքն Ս. Գեորգայ . աւելի հիւսիս երթալով կերևին Յովհաննու կարապետի և Սաղմոսաց վանքերն :

Արարատեան գաշտի հարաւային կողմն Երու- սրէի գետի անցքին վերայ է խորվիրապի վանքն, որ Ս. Էջմիածնի արևելեան և Երևանայ հարա-ւային կողմն կրկնի :

Արարատեան գաշտի հարաւէն սահմանն է Մասիսի լեռը, որ իւր երկու ձիւնապատ և սա- ուուցապատ գագաթներն ամպերու մէջ ծրա- րած է տարուն խիստ մեծ մասերուն մէջ :

Արևելքէն սահմանք են Գեղարքունեաց և Երևանայ լեռներն, որ և այս երևանայ միջա- սահման լեռներն մէջ են Հրազդ գետն, և գաշ- տի մէջէն Երասխ կրկնալայ :

Հիւսիսէն Արայի լեռն և Արագած լեռն . ա- րևմուտքէն կողքայ լեռներ :

Ս. Էջմիածնի Միաբանից անուններն են .

Գեորգ Գ. վեհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց կոստանդնուպոլսեցի :

Գեորգ եպիսկոպոս Վաղարշապատցի, փիճա- կաւոր Աստարխանու

Table with 2 columns: Name and Title. Includes: Մակար եպիսկոպոս, Սարգիս, Անդրէաս, Եղիազար, Գրիգորիս, Գրիգոր, Յակոբեան, յաջորդ հին Նախ- ղանու

(1)Տես լրագրոյն նախընթաց քիւր :

վերագոյն, մինչ Ներսէս պատանին առաքելցաւ 'ի Պօլիս յուսուճն՝ առ թագաւոր վարժապետն : Սերորէ յօրէ գալտեան իւրոյ 'ի Տփլիս, և գտեալ չնորհա յարքայէն Հերակի՛՛ հրամանաւ նորա սկսել էր առնել մանկավարժութիւն . վանորոյ և ստացեալ էր վարժապետ անունն՝ որպէս մականունն : Յովսէփ 'ի 1794 ամի 'ի նա- մակաց Հերակի լսելով այս Սերորէ վարժապետ կոչեալ երիտասարդի անունն, և ուրախանա- լով՝ որ Տփլիս քաղաքի մէջ Չամբանի քերա- կանութիւն ուսուցանող սկսելէ Հայոց մանկանց աւանդ ել իւրեանց բնիկ լեզուն, յայտնելէ ա- զա Յօհաննէս եղիտաղարեանի Լազարեանց և ինդրել է 'ի սէր և 'ի պատիւ վաղածսնօթ տէր Գաբրիէլին, կարգել ռոճիկ երկուհարիւր ռուբլի արծաթ . (որ և կըստանայր ցերեանէն իւր 'ի Տփ- լիսէ՛ նախ աղա Յօհաննէսէն, և ապա 'ի ժառանգ- աւորաց վեհազնեայ տանն այնորիկ) : Սերորէ վարժապետն իմանալով թէ յորո՞ց է շնորհն, որչափ գոհա թիւն մատոյց Հերակի արքային բանիւ բերանոյ, նոյնչափ և սրբազան Արհայն Յովսէփայ և աղա Յօհաննէսին Լազարեանց գը- լով նամակաց :

Ի մտանել Յովսէփայ կաթողիկոսացուն 'ի Տփլիս՝ յորժամ բազմահոյլ ուխտ եկեղեցւոյն ել ընդ առաջ նորա հոգեւորական հանդիսալե- հութեամբ, 'ի թիւս երգեցողաց կայր և Սերո- րէ վարժապետն շապիկ զգեցեալ Գեո. և ս չէին հասել 'ի դուռն փաշայ—վանքի եկեղեցւոյն,

Թաղէոս եպիսկոպոս՝ Առաջնորդ Ախյցխայու Սերափրէ » վանահայր Հազարատու Վարդան » Սանահնի Գաբրիէլ » Այվազեան Սինօգական, այժմ 'ի Թէոդոսիա

Մկրտիչ » Բաբանան Մեսրոպ » Գրիգոր » աւագ լուսարար Երեմիա » Յովակիմ » Աբէլ » Վաղարշապատեցի Պետրոս » Կոստանդնուպոլսեցի Ստեփան » Պրուսացի

Վարդապետք .

Գրիգոր վարդապետ Տաթևացի Սինօգական Ներսէս » Յովհաննէս » Գեորգ » Գանձակայ

Յովհաննէս » Երեմեան կրօնադիտութեան վարժապետ Սուքիաս » Հայերէն վարժ. տեսուչ Արիստակէս » Սեդրակեան, Հայոց պատմու- թեան վարժապետ

Վահրամ » Մանկունի գործակալ վեհարանի Պողոս » վանահայր խորվիրապայ Ստեփան » յաջորդ Տաթևու

Գրիգոր » Գանձակայ Վահան » վանահայր Գոյիանէի Ստեփան » Կէյվէցի Կիրակ » Արամէիքեան Գեորգ » Ղազարեան Մկրտիչ » Ալէքսանդրապօլցի Վրդանէս » Շիրակեցի Մամբրէ » Յակոբեան Գրիգոր » Ստեփան. ներկայ 'ի Ղարաբաղ Խորէն » Անանիա՝ վարդապետ Զաքարիա » Արարհամ Եսայի » Արարհամ

Ս. Էջմիածնի կաթողիկոսաց շինութեանց և կարգադրութեանցն նախնիք բարեխիշատակներ թողած են 'ի պէտս վանուց, որպէս վերն յիշած ենք : Բայց աւելի ազգու և ազգաօգուտ կըհա- մարիմք Ս. Էջմիածնի շինուածոց մէջ ներկայիս վեհափառ Գեորգ Գ. կաթողիկոսինն, որ և նոյն շինուածքներովն վանքն պայծառ կերևի տե- սողաց . յոյս կայ որ օրըստօրէ Ս. Աթոռն լու- սաւոր պահուի : Մնամ. . .

Միճա Գրի. տեր խաջատուրեան :

(զոր զինի աւերածին Տփլիսայ նորոգեալ էր տէր Ղազար Լազարեանն, ) որ Յովսէփ յիշեց զերիտասարդն Սերորէ վարժապետ, և հարցուց այն ժամանակի Առաջնորդին Էջմիածնի (որոյ անունն մուսացել եմ) և նա խիցն բերեց և կանգնեցուց առջևն :

Երբ Սերորէ ծունկ չըքեցաւ համբուրել վե- հափառի գարշապալն, նա՛ որ միով ձեռամբ բռնած ունէր խաչ, և միւսով Հայրապետական գաւազանն, խաչն տուեց Առաջնորդին՝ որ ընդ ալմէ նորա կայր, և գաւազանն իւր տիրացու էլիզրար ձայնապետին, կուսացաւ, կարկառեց իւր երկայն բազուկներն, բռնեց նորա երկու ախանջներէն և ոտից վերայ կանգնեցնելով, ա- սաց, ես Նաբուգոդոնոսորայ արձանն չեմ, և համբուրեց ճակատէն, և հրամայեց որ տիրացու էլիզրարի հետ միտային իւր ետեւէն գայ . և այս- պէս մտաւ վանքի եկեղեցին :

Ի 1794 ամէն սկսած՝ գուցէ քսան անգամ էր Ներսէս կաթողիկոսի սարկաւազն, և յետոյ վարդապետն, եկել Տփլիս, և վերագարծել և գոնէ մէկ անգամ բարեպատեհ ժամանակ չէր ունեցել այցելութիւն առնել Սերորէին յիւրում՝ մանկավարժարանի, որ կայր այն ճանփու վերայ՝ ընդ որ վանքէն պիտի երթան յեկեղեցին Մող- նոյ՝ ֆիթոյնանց աշայի կալուածն : Բայց երբ լուսեցաւ թէ Յովսէփ ելեալ է 'ի ինդրի կաթո- ղիկոսութեան, ահա ձիւսոր սուբհանդակ մի յէջմիածնէ բերեց և տուեց Սերորէ վարժապե-

տի ձեռն մէկ ծրար, ասելով՝ Ներսէս վարդա- պետն ուղարկեց : Ծրարի մէջէն ելաւ մէկ եր- կայն նամակ, որով Ներսէս վարդապետն յիշե- լով իւրեանց 'ի մանկութենէ ծանօթութիւնն, կրմեղազէր Սերորէին որ Ղուկաս կաթողիկոսի կենդանութեան ժամանակն գոնէ մի նամակ չէ գրել առ նա, և ինչ ոչ է խնդրել . մինչ նա կա- ըրէր նորա ամեն խնդիրն կատարել . և նամակն յայն էր վերջացուցել, որ Սերորէն ինչ լսէ կա- թողիկոսի բնարութեան աղագաւ, մանաւանդ արհիպպանձ, իշխանադեռայ Յովսէփայ երկայ- նաբազուկ Արղութեանց արքեպիսկոպոսի մա- պին, գրէ, և 'ի գալ սուբհանդակաց առ նա՛ պատրաստ պահած նամակն ուղարկէ . և այն թղթոց ծախուց համար գրել էր 'ի ծրարին մուր- հակ հարիւր վեներտկեան ոսկւոյ ստանալ յԱ- ռաջնորդէն Էջմիածնի, (քանզի գեո՛ւ և Գան- ձասար ունէր անդ իւր առաջնորդական վիճակն) :

Սերորէ վարժապետն՝ ըստ խնդրոյ Ներսէս վարդապետի, սկսեց գրել առ նա պարտուպատ- չած տեղեկութիւններ, 'ի շարս որոց գնաց և երկայնապատում ճառօրէն գրած ստորագրու- թիւն հանդիսի մտից սրբազան Հայրապետին Յովսէփայ 'ի Տփլիս, և խնդրելոյ և որոնելոյ և գտանելոյ նորա զՍերորէ վարժապետն, և պա- հելոյ զնա առ իւր, և յետ երկուց առուրոյ պատուիրելոյ նմա պատրաստի 'ի ճանապարհ- որովհետեւ կամի տանիլ զնա յէջմիածնի, և անդ նորոգել զժառանգուորաց գործատուսն և ըլլ-

Լամարթի կանուանէր զՀայո՛ւ՝ Արևելեան Չուիչէք՛ : Այս խօսքը ճշմարիտ է ցորչափ որ կընկարագրէ նոցա բարեմտութիւնը, նոցա կծծութիւնն և նոցա արտաքոյ կարգի յաջողա- կութիւնը յաշխատութիւն և 'ի խնայողութիւն Այս յատկութիւններն են, որ Արևելքի ամեն առևտրական կեդրոնաց մէջ, Հայոց ձեռքն ան- ցուցին առնուազն զերրորդ մասն շարժական հարստութեան : Զաւակուք լեռանց, Հայք ևս 'ի թանձրութենէ կովկասու և 'ի տափարակ բլրոց վանու իջեալ, ուր եղև օրօրոցն իրենց ցեղին, ճակատագիրը զարմանալի կերպիւ հե- ուացոյց զնոսա անտի : Գուցէ Հայք ամենէն ազ- դու և զարմանալի օրինակն կընծայեն ազգային կապոյն հաստատութեան, որ Արևելքի ցրուեալ ցեղերուն մէջ սեղմեալ ու երաշխաւորեալ է կրօնական կապով : Թուրքիոյ ընդարձակ կայսե- րութեան և Պարսից թագաւորութեան երկրին վերայ սփռեալ, Հայք՝ ըստ մեծի մասին մուս-

յան իրենց հարց լեզուն և չեն խմանար՝ բայց միայն զեզուս օսանանսն և արարացի ժողովրդաց, որոց հետ խառնուած են: Այսու ամենայն ուր որ բաղդը խմբած է զչայս, այնտեղ զիրար կը ճանաչեն, կը ժողովուն իրեն որոշ հասարակութիւն, կը միաբանին և զիրար կը պաշտպանեն. այլև կը հաւաքուին շուրջանակի սուրբ սեղանոյն՝ դարձուցանելով զայս իւրեանց առ ծայրագոյն գլուխն կրօնի իւրեանց՝ ՚ի կաթողիկոսն, որ կը բնակի ՚ի Ս. Էջմիածին ՚ի հայրենի լեզուն: Հայր կրնան ազգացուցանել այս մասնաւոր յատկութեամբ որոց վրայոք խօսեցայ՝ հաստատամտութիւնն և զժառանգութիւնն ՚ի մէջ նոցա որ ինչ հարկ է ժողովուրդ մի կազմելու, այսինքն իրենց ազգային բնաւորութիւնը:

Մարտի 1663 թիւէն հետեւեալ յօդուածը յառաջ կը բերուի, զոր ուշագրութեան արժանի կը համարուի: Կրնենք թէ Ասորոց կաթողիկոսն որ դեռ լնտրա կը գտնուի, յաջողի է Վիքթորիա թագուհւոյն ներկայանալ, և հիմն ալ Հնդկաստան երթալու կը պատրաստուի եղբր՝ հոն գտնուող Ասորի եղբարց այցելութիւն ընելու պատրուակաւ: Բայց բուն նպատակը տեսակ մը բազդախնդրութիւն է:

Այս իրողութիւնը մեր Հնդկարնակ ազնիւ ազգայնոց ուշագրութեան ներկայացնելով, կը ծանուցանենք թէ այդ անձին արարքներէն նոյն իսկ Ասորի ժողովրդեան մեծ մասը դժգոհելով բողոքադրեր ուղղած են առ Պատրիարքարանն Հայոց, և թէ այդ Պատրոս անուն կաթողիկոսը՝ դարաւոր սովորութեան հակառակ, որով իւր նախորդները մեր Պատրիարքարանի միջոցաւ կը ստանային թէ իրենց կաթողիկոսական հրովարտական և թէ եկեղեցեաց շինութեան և այլ արտօնութեանց հրամանագրերը, ընդատանալով իւր կաթողիկոսութեան հրովարտական ուղղակի ինք ստանալուց Բարձրագոյն Դոնէն. բայց Բ. Դոնն առանց մեր Ս. Պատրիարքի թագրերին չհամարաւ այդ հրովարտակը շնորհել: Ասոր վրայ հարկադրեցաւ՝ քանի առ երեսս՝ ընդատուութիւնը մէկդի թողուլ և Պատրիարքարանի գերին ինչալ Ս. Պատրիարքն ալ կաթողիկոսական հրովարտակն և միանգամայն պատուանչան մ'ստանալով իրեն յանձնեց և պատուէր տուաւ իւր արժանի կրթայ, ժողովուրդը հայրաբար խնամէ, և դժգոհութեան ու գանդատանաց առ ի թ չտայ: Սակայն այդ անձը՝ հրովարտակն ու պատուանչանը ձեռքն անցնելուն պէս՝ փոխանակ Տիգրանակերտ երթալու, աղղակի Լոնտրա գնաց՝

առանց Պատրիարքարանի գիտութեան, և ըմբոստութիւնը նորէն ձեռք առնելով ինքզինք Հայոց Պատրիարքարանի իրաւասութեանն անկախ ճանչցնելու ճգանց մէջ կը գտնուի:

Այս պարագաները ծանուցանելով կը գողուչայնենք մեր Հնդկարնակ ազգայիններն, որ չխաբուին այդ անձին կեղծապատիր վարմունքէն. և եթէ կարելի է, նոյն իսկ Հնդկարնակ Ասորի ժողովրդեան ալ իմացնեն թէ այդ մարդքն երկու եկեղեցեաց մէջ դարերէ ՚ի վեր հաստատուած սիրալիր յարաբերութեան կապը խզելու կաշխատի՝ ՚ի հրաս նոյն իսկ Ասորի ժողովրդեան՝ որ ամեն ժամանակ Հայոց համակրութիւնն ու օժանդակութիւնը վայելած է, և վայելելու ալ միշտ պէտք ունի:

Այս տողերը մասնաւորապէս կալիաթարի Հայոց աւագերէց արժաւ տէր Յովհաննէս Խաչիկեան քահանային ուշագրութեանը կը յանձնենք:

«Լոնտրայէն գրուած նամակէ մը կիմանանք, կըսէ Մարտի, թէ Լոնտրայի Պարսկական դեսպան Մելքոն խանի լծակից ազնուուհի Հերիքա տիկինն, որ Պ. Տատեան վեմանչուք Առաքել Եփէնտիի դուստրն է, իւր կրտսեր քրոջը ազնուափայլ երմանիկ օրիորդին հետ՝ Անգղիոյ թագուհւոյն ներկայացրել է և կէս ժամու չափ հետք տեսակցելու պատիւ ունեցեր են»:

Արշալույ Մարտի 8, թիւ 1009 թերթին մէջ հետեւեալը հրատարակած եմք:

«Մարտի անցեալ ամսոյ 18 թուոյն մէջ հաճութեամբ սրտի ընթերցաք զյետագայ ազգօգուտ տնօրէնութիւնն, զոր ամենայն Հայոց վեհա կաթողիկոսն բարեհաճել է ընելու յօգուտ ընդհանուր ազգին:

«Տփլիսէն գրուած նամակէ մի կիմանամք թէ վեհա կաթողիկոսն՝ Այվազեան գերափարքիէլ արքեպիսկոպոսը Տփլիսի վիճակին Առաջնորդ և միանգամայն Ս. Էջմիածնայ ճեմարանին տեսուչ ընտրել և իւր այս տնօրէնութիւնը Ռուսաց վեհա կայսեր հաւանութեան առաջարկել է»:

Տփլիսէն ՚ի հաւաստի աղբերաց ընկալեալ մանրամասն տեղեկութիւնքն մեր կատարելապէս կը հաստատեն զվերոյիշեալ տնօրէնութիւնն վեհա Հայրապետին ամենայն Հայոց, և կը յաւելուն թէ գերաւ տէր Գաբրիէլ Այվազեան Ս. Արքեպիսկոպոսն այնու պայմանաւ յանձնառու եղեր է յիշեալ կրկին ծանր պաշտամանց, որ զամիսս ինչ ՚ի տարւոյն անցուցանէ յազգային ճեմարանն սրբոյ Էջմիածնի և զմնացեալ ժամանակն ՚ի Տփլիս, առ ՚ի խնամել ՚ի մօտոյ զհոգևոր հօտ իւր:

այարանն Սիմէօն հոգեւոր Հայրապետի հոգևոր ձեռքի իւրոյ, որ յաւուրս Հայրապետութեան Ղուկասու խանդարեալ էին:

Սերոբէ վարժապետն ասած չէր Պրինցիին. այլ զկնի վաչակեան իւրոյ ՚ի Տփլիս լսել էր բազում ինչ յակնատեսից, և մանաւանդ ՚ի տէր Առաքելէ Ղամաղխան, ՚ի Հարիմեան բժիշկ թաթուլէ և ՚ի Փէթիպեանց աղայէ, և յայտոց. և յառաջնում հացկերութիւն ուր կային և ընդ առաջ և կեալք Հայրապետացուին Հայոց հինգ Մեթրք Ղարաբաղի, մինչ արքայորդին Գալիթարար աւարկութիւն վանն անցնի Պրինցի և առեման Տփլիսայ, Մեթրք սկսան ՚ի հաճոյս Սպիշիոյ ծաղր ասնել զեւրոպական կրթութիւնը: Ս. Ս. խօսակցութեանց ժամանակն Սերոբէ վարժապետն ևս ընդ երգեցեաց կայր անդ, և լսել էր, որ ասել էր Յովսէփ Աւետարանի մէկ խօսքն թէ՛ որ ոչ ժողովէ բնդ յո՛ցրուէ, Ընդ որ դժգոհեալ էին թէ հրազեանն ՚ի Ղորգանեանն Պայտնապետ կը բնակեցել է, որ ինչպէս դեռ նոր էին Տփլիսի տեսրածի վերջն, նոյնպէս և Պրինցի անցնի խոյրի սպիքս դեռ ևս ծածկուած չէին: Մինչ արքունիքն զանազան կուսակցութեանց յօգուտ Իւուսաց, օսմանցուոց և Պարսից անբախտեանց շփոթից մէջ կը տարուբե-

րէր, ժողովրդեան մէջ ևս դո՛հ և դժգոհ կողմնակցութիւնք իրերաց վերայ զօրանալ կը թեւակոխէին: Յովսէփ որքան համախոհ ունէր Տփլիս, այնքան ևս հակառակորդ կային, որք անդադար բանագնաց կը լինէին Էջմիածնի հետ: Արդուութեանց մէջէն անգամ կային բազումք որք առ երեսս կը կեղծաւորէին, այլ ՚ի ներքուստ չարաչար թշնամիք էին Յովսէփայ. որով հետեւ նա իւր եղբորորդուոց միայն տուել էր նախընտրութիւն քան զայլս: Բազում Հայք և Վիրք նոյն իսկ Յովսէփայ Տփլիս մտանելոյ օրն՝ տեսանելով խաժամուժ ամբոխի խուռն բազմութիւնն ստեղ էին միմեանց. մեզ ինչ կը պակտէր՝ եթէ ինչ Պրինցիին էլ այսպէս ընդունելութիւն անէինք, գուցէ մենք էլ այսօր մարդոյ կարգ մտած լինէինք, քաղաքը քանդված չլինէր, այնքան սրբուն և գերի զոհած չլինէինք:

Տփլիսի մէջ կային դեռ ևս Պրինցի զինուորներէն, որ ոմանք առաջին դարանակալութեան ժամանակէն էին մնացել, և ոմանք Ղարաբաղէն էին յետ դարձել, որ Յովսէփայ փառքն տեսանելով աչքերն թաց արած յերկինքն կընայէին և կը հառաչէին: Տփլիս այնպէս տեղ չէր, որ Յովսէփայ նման ճանապարհորդ կարող լինէր մօտէն անցնիլ, և ներքս չմտնել:

Գուցէ թէ՛ Յովսէփ ինքն մուտցել էր անցեալ բաներն, սակայն ոչինչ առհաւատչեայք ունէր կարծել, թէ և այլք պիտի մուտցած լինին. մա-

կըսուի նաև թէ այժմեան Առաջնորդ Վրաստանի և իմէրէթի՝ որ է Ս. Մակար արքեպիսկոպոսն, նշանակեալ է Առաջնորդ Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակին:

Նամակազիր ազգասէր բարեկամն, որ գտեղեկութիւնս զայսօսիկ հաղորդէ մեզ, ծանուցանէ միանգամայն թէ վեհա յարազանագոյն կաթողիկոսին առաջարկութիւնն ՚ի սկզբան ոչ սակաւ ահացուցիչ երևեալ է Այվազեան Ս. Արքեպիսկոպոսին ՚ի պատճառս ծանրութեան երկոցունցն ևս պաշտամանց, մանաւանդ յետ այնքան տաժանական վատտակոց և հալածանաց, որոց ենթակայ եղև գրեթէ զամս 18-րորով Ն. Սրբազնութիւնն, դժբաղդաբար, պարտասեցաւ հոգևով և մարմնով. բայց և խորամուխ եղևալ ՚ի խեղճութիւնս պարտուց հնազանդութեան առ հոգևոր Վեհապետն իւր՝ իբրև առ երևելի գլուխն Հայաստանեայց եկեղեցւոյ, վերջապէս հաստատեաց ՚ի միտս նուիրել և զվերջին առուրս բազմավատակ կենաց իւրոց, և զյողնատեսակ գիտնական հմտութիւնս իւր ՚ի սպաս պաշտաման ազգին և եկեղեցւոյն իւրոյ:

Իզմիր, 17 Ապրիլ 1875

Յարգոյ խմբազիր Արշալույ անդրանիկ լրագրոյն:

Արևելեան Մամուլը Մարտ ամսուան անտրին մէջ «Հայերը կաւելնան թէ կը պակտին» յօդուածոյն իզմիրի վիճակագրութեան վերաբերեալ տողերը կարծեմ թէ շատ սխալ են: Մեծա. Մամուլեան կ'ըսէ թէ 1864ին ազգահամար ըլլալով 2200 հոգի արու հայ կարձեծ ու փոքր. 1868ին այս թիւն 1800ի իջեր էր, այսօր վեր ՚ի վերոյ հաղիւ 1200 հայ կը գտնուի: Ո՛հ, ինչ տխուր նկարագրութիւն. նախ գիտնալ պէտք ենք որ 1864և68ին ըսուած ազգահամարները զինուորական տրոյ պատճառաւ եղած են. ուստի ծտար տէրութեանց հպատակ հայերը՝ ուրոնք մեծ թիւ մը կը ներկայեն, նոյն հաշուէն դուրս են: Երկրորդ՝ 1863ին 1800 հոգի իջած ըլլալը ինչ եղանակով է, չգիտեմ. բայց կարծեմ թէ նոյն տուրքը վճարելու անկարողները ազգահամարին մէջ անցած չեն. և թէպէտ 1864էն յետոյ քոլերա մ'ալ եղաւ, բայց ընդամենը 137 հոգի մեռան հայերէն ընդ այր և ընդ կին: Երրորդ՝ այսօրուան վեր ՚ի վերոյ հաղիւ թէ 1200 հոգի գտնուիլը ցցունելու համար ամենեկին ազգահամար մը չ'ունինք:

Յիրաւի ասանկ անուշագրութեամբ գրուած յօդուած մը երբէք չ'էի յուսար Արևելեան Մամուլը պէս խոհուն և լրջամիտ խմբագրութեանէն. բայց կարելի է մեծա. Մամուլեան իր չափազանց ազգասիրութեամբ ազգին ներկայ վի-

նաւանդ երբ այնքան տարի փորձելէր Ներսիսի աչալըութիւնը, երբէք չ'ունէր իրաւունք չկաւ կածելոյ, թէ ուր ինքն Պրինցի համար դարանակալութիւն էր արել, այնտեղ և իւր համար դարան լրած չլինի:

Լաւ աշակերտ էր Աւետարանի, բայց միաքչ չբերեց Յիսուսի վերջին խօսքերի մին թէ՛ որ սուր առնուցու սրով մեռցի: Անձնապատան վտտահութեամբ կարծեց՝ որ ինչպէս ինքն անյիշաչար է, այլևս այնպէս անյիշաչար կը լինին սունա: Ազգասիրութիւնն և փառասիրութիւնն երկու ձիոց նման լծել էր ՚ի կառս իւր և հանդէս յաղթանակի էր կարգել. տասնեւչորս դար էին այնուհետեւ գլորվել, մինչ Տրդատ թագաւորին և Մեծ Ներսէս Հայրապետին դեղ մահու էին արբուցել. միլիոնաւոր հայազգիք այնուհետեւ ոտնակոխ էին եղեալ, բայց այն դեղատուաց շառաւիղքն մնացեալ էին՝ որ այս ազգաւորս ջահն չի յուցանեն:

Ուրախութեամբ զուարթացած դարձաւ իւր բնակարանն բարեկամի տանէն, և զգաց՝ որ թուճաւորվել է. քան զամենայն ինչ առաջ խնդրեց սուրբ հաղորդութեան խորհուրդն. երբ ճաշակեաց իւր փրկիչ կենդանարար մարմինն և արիւնն, ապա հրամայեց, որ դեղձափ տան:

ԾԵՐՈՒՆԻ ԳԱՐԻԷԼ ՊԱՏԿԱՆՆԻՆ (Շարունակեցի):

